





ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՆԱՊԱՐՅ ՎԻԼՅՈՒՄԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՑ ԶԵՏՈՒ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ճանապարհը, եւ ոչ մեկը չկարողանա խանգարել մեր ժողովրդին ազատ ընտրության հարցում: Միաժամանակ մեր ներկայիս հավաքը նվիրված է մի մարդու ծննդյան 50-ամյա հոբելյանին, ով բարձրաձայնեց այն արտահայտությունը, որով մենք ավարտեցինք Եվրոպայի հետ մեր-ծեցման փուլը եւ դարձանք Եվրախորհրդի անդամ: Ձուրաք ժվանհի-ան Վրաստանի վարչապետն էր, խորհրդարանի նախագահը, քաղաքական գործիչը եւ ուղղակի մի արտասովոր մարդ, որի անվան հետ կապված են վրաց նորագույն պատմության շատ իրադարձություններ»,- հայտարարեց Ուսուփաշվիլին ողջունելով Ձուրաք ժվանհիյի ընտա-

նիքի անդամներին: Նրա խոսքերով, Եվրոպական ինտեգրումը կոնկրետ որեւէ առանձին քաղաքական ուժի կամ դարաշրջանի ձեռքբերումը չէ, դա այն ուղին է, որը շարունակվում է, եւ որի հաջողության համար Ձուրաք ժվանհիան մեծ ավանդ ներդրեց:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Վիլյուսի գագաթաժողովից հետո Վրաստանի կառավարության կարեւորագույն խնդիրը հանդիսանում է սեպտեմբերին ասոցիացման մասին պայմանագրի ստորագրումը: Նրա խոսքերով, երկիրը թեւակոխել է ակտիվ գործողությունների փուլ: «Վիլյուսում մենք ստորագրեցինք այնպիսի շրջանակային հա-

մաձայնագիր, որով հաստատեցինք, որ Վրաստանը պատրաստ է Եվրամիության հետ միասին իր ավանդը ներդնել Եվրոպական անվտանգության գործում: Այսպիսով, Վրաստանը դառնում է կայունության եւ խաղաղության ուղորտում Եվրամիության հուսալի գործընկերը: Կարեւոր է, որ Վիլյուսի գագաթաժողովում մենք ներկայացրինք ոչ միայն մեր ձեռքբերումների արդյունքները, այլեւ սկսեցինք Եվրամիության հետ համագործակցության մոր փուլը: Այսօր մենք թեւակոխում ենք իրական գործողությունների փուլը եւ պատրաստ ենք ստանձնած պարտավորությունները մարմնավորել այնպիսի կոնկրետ գործերում, որոնց արդյունքները մեր քաղաքացիները կզգան մոտ ժա-

մանակներում, կկարողանան օգտվել Եվրոպայի հետ մերձեցումից ծագող ձեռքբերումներից»,- հայտարարեց Դարիբաշվիլին:

Ելույթ ունենալով Ձուրաք ժվանհիյի ծննդյան 50-ամյակին նվիրված «Վրեւելյան գործընկերություն ճանապարհի Վիլյուսի գագաթաժողովից հետո խորհրդաժողովում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլինը նշեց. «Ձուրաքը իրատես քաղաքագետ էր, նա խոսում էր այն իրատեսական քայլերի մասին, որոնք հարկ էր կատարել եւ այդ իրատեսական զգույշ քայլերով հասանք այն իրականությանը, որն ի վերջո հստակորեն կանխագծեց, որ մենք Եվրոպացիներ ենք: Որպեսզի խորացնենք այդ քայլերը, մենք պետք է անցնենք կոնկ-

րետ ճանապարհ, եւ դա անելու ենք մեկ տարվա ընթացքում: Այդ ճանապարհի մասին շատ խոսվեց Վիլյուսում: Այնտեղ մենք հստակորեն տեսանք, որ Եվրոպացիները մեզ ընկալում են որպես կայունորեն այդ ուղիով ընթացող, ընդլայնված Եվրոպական ընտանիքի անդամ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Նրա խոսքերով, Եվրոպական ընտրությունը կատարել են մեր նախնիները, եւ դա պարտավորություն է ապագա սերունդների համար:

Վրաստանի նախագահի հայտարարությամբ, պատմական անարդարություն է, երբ այդ գործընթացին Ձուրաք ժվանհիան չի մասնակցում եւ իրենց հետ միասին չի պայքարում այդ ուղու համար:

ՕՐԵՆԱԴԻՐ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԿԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանջվի եւ մեկ տարի աշխատանքի կարգավորման համար»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին: Անդրադառնալով տեղական ինքնակառավարման օրենսգրքի նախագծի կապակցությամբ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի հայտարարությանը՝ խորհրդարանի նախագահը նշեց, որ այդ հարցով ինքը Կաթողիկո-

սի հետ չի խոսել: «Ուղղակի ժամանակի առումով մեր հանդիպումը համընկավ, թեպետ մենք այդ թեմայի շուրջ չենք խոսել»,- հայտարարեց Ուսուփաշվիլին:

Ըստ խորհրդարանի խոսնակի, տեղական ինքնակառավարման օրինանախագծի շուրջ ծագած թյուրիմացությունը մոտ ժամանակներս կկարգավորվի: «Եթե ինչ-որ մեկը գտնում է, որ ինքնակառավարման մոր օրենսգրքը սպառնալիք է ստեղծում Վրաստանի միասնության համար, ապա Պատրիարքի դիրքորոշումն ավելի քան բնական է: Սակայն համոզված եմ, որ մոտ ժամանակներս բոլորը, այդ թվում նաեւ Պատրիարքը, կհամոզվեն, որ այդ մասին խոսք ընդհանրապես չկա, եւ մենք ցանկանում ենք առավելագույնս առաջ ընթանալ ժողովրդավարության ուղիով»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄ

ԴԱՎԻԹ ՆԱՐՄԱՆԻԱ. «ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԹԻՎԸ 18-ԻՅ ԿԶԱՍՅՎԻ 12-Ի»



Ինչպես հայտարարեցին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցների նախարար Դավիթ Նարմանիան, տեղական ինքնակառավարման օրինանախագծի կապակցությամբ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի քննադատությունից հետո, նախագծում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Նախարարի խոսքերով, եթե նախագծի սկզբնական տարբերակում նախատեսված էր ստեղծել 15 հազար եւ ավելի բնակչություն ունեցող 12 ինքնակառավարման քաղաք, որտեղ քաղաքապետերը կընտրվեն ընտրությունների միջոցով, ապա քննարկումից հետո, որոշում է ընդունվել առանձնացնել միայն կենտրոնական քաղաքները, իսկ գյուղում հիմնել ինքնակառավարման համայնքներ:

«Այդ դեպքում կմնան ընդամենը 7 ինքնակառավարման քաղաքներ: Ինչ վերաբերում է գյուղերում ինքնակառավարման հարցին, ապա բնակիչները կարող են մնան միավորումներ հիմնել, որպեսզի կարողանան լուծել տեղական նշանակության հարցերը: Ինքնակառավարում կլինի միայն ինքնակառավարման քաղաքներում եւ համայնքներում: Ինքնակառավարման քաղաքում կընտրվի քաղաքապետը, իսկ ինքնակառավարման համայնքում՝ վարչության նախագահը: Խոսվեց նաեւ գրանտի ստացման մասին: Այդ հարցում էլ հստակություն մտցվեց՝ գրանտը հնարավոր կլինի ստանալ ֆինանսների նախարարության համաձայնության դեպքում»,- հայտարարեց Դավիթ Նարմանիան:

Նրա խոսքերով, ինքնակառավարման քաղաքներին կարգավի-

ճակ կտրվեն ներկայումս գործող երկրամասային կենտրոններին, մասնավորապես Գորին, Թելավին, Սցխեթան, Ախալցխեյն, Օգուրգեթին, Ամբրուլուրին եւ Ձուզդիդին:

«Ինքնակառավարումները կունենան հստակ լիազորություններ: Դա տեղական նշանակության այնպիսի հարցերի կարգավորումն է, ինչպիսիք են ջրամատակարարման տնտեսությունների կարգավորումը, կենցաղային աղբի դուրսբերումը, գյուղական ճանապարհների շինարարությունը եւ այլն: Կենտրոնական իշխանությունը կգործի պետական նշանակության հարցերի շուրջ՝ կսահմանի կանոններ, չափորոշիչներ ու կարգավորման սկզբունքներ, նաեւ կիրականացնի տեղական ինքնակառավարման միավորման նկատմամբ վարչական վերահսկողություն: Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունած օրենսդրական ակտերը համապատասխան պետական ծառայությունների կողմից կանցնեն իրավական փորձաստուգում: Ինքնակառավարումը կունենան նաեւ եկամտի սեփական աղբյուրը, իսկ տնտեսապես թույլ ինքնակառավարումները կստանան հավասար տրամաֆերներ»,- ընդգծեց Դավիթ Նարմանիան:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ



ԱՌԱՋՆԹԱՑ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեկօրյա աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում ԱՄՆ պետքարտուղարի օգնական Վիկտորյա Նուլանդը:

Այցի շրջանակներում, ամերիկյան դիվանագետը համընդհանուր ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի հետ, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու, խորհրդարանական փոքրամասնության ղեկավարների հետ:

Հանրագումարելով այցի արդյունքները՝ Վիկտորյա Նուլանդը առանձնակի ընդգծեց վերջին տարիների ձեռք բերած առաջընթացը: «Դա իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ֆիզիկական ենթակառուցների զարգացման, այլեւ ժողովրդավարության շինարարության գործում: Կրկին անգամ

ընդգծում են Միացյալ Նահանգների աջակցությունը Վրաստանի անվտանգության եւ բարօրության հաստատման գործում»,- հայտարարեց Նուլանդը:

Ըստ Նուլանդի, Վրաստանի կառավարությունը հնարավորինս կապեր պետք է հաստատի Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանների հետ: «Հարկ է շարունակել կապերի հաստատումը արեւմտեւրի եւ օսերի հետ, որպեսզի նրանք էլ ներգրավվեն Վրաստանի ժողովրդավարական գործընթացներում: Այն, ինչ կարող է նրանց առաջարկել Վրաստանը, իր հետ միասին, Եվրոպայի հատված դառնալ է: Նրանք արժանի են դրան, քանի որ հանդիսանում են Վրաստանի քաղաքացիներ»,- հայտարարեց Վիկտորյա Նուլանդը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԽԱՐՏԻԱՅԻ ՆՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Վրաց-ամերիկյան ռազմական գործընկերության խարտիայի շրջանակներում, Վաշինգտոնում, դեկտեմբերի 9-ին, մեկնարկեցին աշխատանքային երեք խմբերի համընդհանուր:

Համագործակցության հարցերի հստակեցման համար Վաշինգտոն են մեկնել անվտանգության եւ պաշտպանության, մշակութային փոխանակության ու էկոնո-

միկայի, էներգետիկայի եւ առևտրի աշխատանքային խմբերը: Պատվիրակությունը գլխավորում է Վրաստանի ԱԳ առաջին փոխնախարար Դավիթ Զակալիանին:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ԵՐՎԱՆՆԱՐԺԻ ԶՈՐԵՐԻ ԳԻՇԱՍԿԻ ՕՐՆ Է

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԿԱՐԳ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հավարտ հոգեւոր արարողության, ներկաներին դիմեց Վիրահայոց թեմի առաջնորդը: Սրբազան հայրը Աստուծո փորձություն անվանեց արցախյան պատերազմի ծանր օրերին շրջափակման մեջ գտնվող Հայաստանին եւ հայ ժողովրդին պատուհասած երկրաշարժը, խոսեց ավերված քաղաքների ու գյուղերի, մարդկային անհամար զոհերի ու վիրավորների, ուշակորոյս ու անօթեւան մարդկանց մասին: Անսպասելի հարվածից ժամանակն ասես կանգ առավ... Բայց հավատքը, որ կար ժողովրդի մեջ, չթողեց նրան հուսալքվել ու ցավին տր-

վել: Ժողովուրդն իր մեջ ուժ գտավ ոտքի կանգնելու եւ, աշխարհի երկրների համակողմանի օգնությամբ, կառուցել ավերված քաղաքներն ու գյուղերը, սիրով վել անվերադարձ կորստի հիշատակով:

Թեմակալ առաջնորդն արժեւորեց հարեւան քրիստոնյա Վրաստանի ու վրաց ժողովրդի ցուցաբերած օգնությունը: Նա բարձր գնահատեց Վրաստանի նախկին ղեկավար Ջուրբեր Պատիաշվիլու ցուցաբերած մարդասիրությունը, որը երկու հարեւան պետությունների դարերի խորքից եկող բարեկամության ու աջակցության դրսեւորում էր:




Երկրաշարժի զոհերի հիշատակին հոգեհանգստյան կարգ կատարվեց Վիրահայոց թեմի բոլոր գործող եկեղեցիներում ու աղոթք բարձրացվեց առ Աստված՝ նման աղետներից փրկելու աղերսով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈՒ ԴԻՎԱՆ

ԻՐԱՎԼԻ ՄԵԼԱՇՎԻԼԻ. «ՕՐԻՆԱՆՍԻՍԱԳԻԾԸ ԱՆՉԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ ԶԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ»

Ինքնակառավարման քաղաքների թվի նվազեցումը հաստատեց նաեւ տարածաշրջանային եւ ինքնակառավարման մարմինների հետ հարաբերությունների պետական գրասենյակի ղեկավարումն ունեցող Դավիթ Մելաշվիլին:



Նրա խոսքերով, դա ոչ կառավարական ընդդիմության դիտողություններից մեկն է ուղղված ինքնակառավարման օրինանախագծին: Մելաշվիլին նշեց, որ ներկայումս գործող ինքնակառավարման 5 քաղաքներին կավելացվեն 7-ը:

Ինչ վերաբերում է օրինանախագծում հնարավոր անջատողական սպառնալիքներին, ապա, Մելաշվիլու խոսքերով, օրինանախագիծը, ընդհակառակը, նպաստում է ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը, քանի որ թույլ է տալիս իշխանության կառույցներում ունենալ իրենց ներկայացուցիչներն ու վրացիների հետ միասին քննարկել երկրամասի հիմնախնդիրները: